ՆԱԻՐԱ ԱՐԱՐԱՏԻ ԽԱՉԱՏՐՅԱՆ
Բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ
Խ. Աբովյանի անվան հայկական պետական
մանկավարժական համալսարանի բանասիրական
ֆակուլտետի դեկանի տեղակալ
Khachatryannaira21@aspu.am
ORCID ID: 0000-0002-2228-8469
DOI: 10.54503/978-5-8080-1557-9-235

ՍԵՆՏԻՄԵՆՏԱԼԻԶՄԻ ԴՐՍԵՎՈՐՈՒՄՆԵՐԸ 19-ՐԴ ԴԱՐԱՍԿԶԲԻ ՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ

Բանալի բառեր՝ *հուզական զգացմունքներ, սենտիմենտալիզմ, գրական հոսանք, ազգային գաղափարներ, հոգեբանական ապրումներ, հայկական, հուշագրություն:*

Ներածություն

Գրականությունն ինքնին զգացական, հուզական, անձնական տվայտանքների արտահայտություն է: Մարդու գիտակցական գոյության ողջ ընթացքում այն ձևավորվել է որպես հոգեվիճակի դրսևորման ձև՝ հիմքում ունենալով խոր զգացողություններ: 18-րդ դարում Անգլիայում ձևավորված գեղագիտական ուղղությունը Լորեն Սթերնի՝ Ֆրանսիայում կատարած ուղևորության արդյունքում գրված «Սենտիմենտալ ճանապարհորդություն» երկի վերնագրի ազդեցությամբ կոչվեց սենտիմենտալիզմ (զգացապաշտություն, զգայականություն)[1]:

Այն «…առաջացավ իբրև ֆեոդալիզմի և միապետական իշխանության դեմ ծավալված պայքարի գեղարվեստական արտահայտություն, հանդես էր գալիս անհատի իրավունքների պաշտպանությամբ»[2]:

---

[1] Տե՛ս **Զրբաշյան Էդ.,** Գրականության տեսություն, Եր., Երևանի համալսարանի հրատ., 1972, էջ 418:
[2] **Զրբաշյան Էդ., Մախչանյան Հ.,** Գրականագիտական բառարան, Եր., «Լույս» հրատ., 1972, էջ 256:

Երևույթն ունի վաղնջական ծագում: Դեռևս հնագույն աշխարհում արվեստի և մասնավորապես գրականության մեջ անձնական ապրումների չափազանցված հանրապատկերին եսի կարևորության, անսխալականության, հալածված ու չգնահատված լինելու հանգամանքը դիտվում էր առաջնային ազդակ քնարական շնչի ստեղծագործությունների համար: Սենտիմենտալ զգացողությունը մի երևույթ է, որ մարդկային հոգեբանությունից առանձնացնել հնարավոր չէ. այն հատուկ էր անգամ նախամարդուն, սակայն որպես գրական ուղղություն՝ այն նպատակահարմար ենք գտել ներկայացնել՝ միջնադարից սկսած: Սենտիմենտալ զգացողություններ են ներկայացնում հատկապես ժողովրդական բանահյուսության[3] մեջ տարածված սգո երգերը, հեքիաթների չափազանցությունները, ճակատագրի անխուսափելիության ու անողոքության սնոտիապաշտական հավատալիքները, որոնք իրենց անմիջական ու հեռավար ազդեցությամբ դարձան մշտական թեմա և գեղարվեստական հայացք ու ճաշակ թելադրեցին 19-րդ դարասկզբի հայրենի գրականության պարունակներում: Չնայած այն կարծիքին, որ հայ գրականության մեջ սենտիմենտալիզմն ամբողջական արտահայտություն չի գտել[4], փորձել ենք այս հոդվածի շրջանակներում ներկայացնել գրական այս շարժման որոշ ազդակներ,առանց որոնց հայ գրականության մի շարք ստեղծագործություններ անհնարին կլիներ մեկնաբանել ու դասակարգել՝ ըստ գրական ազդեցությունների:

Սենտիմենտալիզմի ազդեցությունները հայ նոր գրականության ձևավորման առաջին փասնամյակներին

Դեռևս 18-րդ դարավերջին հասարակական ու գեղագիտական բազմադիմի պատկերացումների բախման միջավայրում հայ գրականության համատեքստում ձևավորված սենտիմենտալիզմի գրական հոսանքն ունեցավ դրսևորումներ, որոնք բավական նկատելի էին և ազդեցիկ ներգործություն էին ունենալու հետագա ողջ գրականության ընթացքի վրա: Մարդկային սովորական կյանքն ու իրական ներաշխարհի պատկերումը գրականության հիմնական նյութ դարձնելու միտումը դրական իրողություն է, սակայն «…հատկապես ավելի ուշ շրջանի սեն-

[3] Տե՛ս **Դոլուխանյան Ա.,** Հայ ժողովրդական բանահյուսություն, Եր., «Զանգակ» հրատ., 2008, էջ 175:
[4] Տե՛ս https://hy.wikipedia.org/wiki/ Սենտիմենտալիզմ:

տիմենտալիստների մոտ երբեմն նկատվում էր թեմաների մանրացում, նեղ անհատական զգացմունքների նշանակության չափազանցված պատկերացում»[5]: Անձնական խոր ապրումների ազդեցությամբ կյանքի ու միջավայրի անարդարություններից հալածված հեղինակները երկնում էին թախծոտ, մելամաղձոտ, երբեմն անգամ եղերական ստեղծագործություններ, որոնց հիմքում հսկայական դեր ուներ ներքին ողբերգություն ապրող հեղինակի անձնական կյանքը, դժբախտ դիպվածները, հարազատ ու մտերիմ անձանց մահն ու անհաջողություններն ու անգամ մտացածին ընկալումները, որոնք լրացվում էին փիլիսոփայական, միստիկական, արկածախառն, երևակայական խոհերով ու ոճավորմամբ: «Սենտիմենտալիզմը առաջինը ծառացավ բանական մարդու դեմ՝ բանական մարդու աբստրակցիային հակադրելով իրական, կոնկրետ բանական մարդը»[6]: Իրական կյանքում ճիշտ դատող, չսխալվող, միշտ սթափ մտածող անհատը շատ հաճախ երևակայության արդյունք է: Մարդն ավելի շատ զգացմունքային է. բարեբախտաբար «... զգացմունքը այն միակ ուժն է, որ կարող է կանխել հասարակության տրոհումը և կապակցել օտարվող մարդկանց»:[7]

Ինչպես հայկական կլասիցիզմը[8], և ավելի ուշ՝ հայկական ռոմանտիզը[9], այնպես էլ նրան նախորդող սենտիմենտալիզմը, ռոմանտիզմի գրական ուղղությանը հասնելու անցումային շրջափուլում ունեցավ իր առանձնահատուկ հայկական դրսևորումները: Շատ հաճախ արհեստականորեն հուզականություն էր հաղորդվում նյութին, որը անհիմն նկարագրություններ ու տրամադրություններ էր հաղորդում բուն ասելիքին: Վերջինս հատկապես աղավաղվում էր զգացմունքների արտահայտման ողբախառն, լալկան բնույթի ու անձնական ապրումներին զուգահեռ բնության, շրջապատի ավելորդ ազդեցությունների ներքո:

---

[5] **Զրբաշյան Էդ.,** Գրականագիտության ներածություն. բանարվեստի հիմունքներ, Եր., ԵՊՀ հրատ., 2011, էջ 370:

[6] **Սարինյան Ս.,** Հայոց գրականության երկու դարը, Գիրք չորրորդ, Եր., «Տիգրան Մեծ» հրատ., 2004, էջ 166:

[7] Նույն տեղում:

[8] Տե՛ս Հայ նոր գրականության պատմություն, հ. 1-ին, Եր., Հայկական ՍՍՌ ԳԱ հրատ., 1962, էջ 95, Ավանդույթները և գեղարվեստական զարգացումը, Եր., Հայկական ՍՍՌ ԳԱ հրատ., 1976, 119:

[9] Տե՛ս Ավանդույթները և գեղարվեստական զարգացումը, էջ 146; **Սարինյան Ս.,** Հայկական ռոմանտիզմ, Եր., Հայկական ՍՍՌ ԳԱ հրատ., 1966:

Այս ամենի անմիջական ազդեցություն և արդյունք կարելի է համարել, օրինակ, Հարություն Ալամդարյանի քնարական երկերը, որտեղ հեղինակն անաղարտ պատանեկան սիրո, փոխադարձ ու երջանկավետ վայելքի, թեկուզ անգամ մերժման տագնապի ու ցավի փոխարեն, երգում է սիրած կնոջ՝ Մարգարիտի մահվան մորմոքն ու անամոք ցավը[10]:

«Հետագայում բանաստեղծի գրչի տակից դուրս եկած բոլոր սիրերգերը այդ վշտի քնարական դրսևորումներն են լոկ»[11], որոնք սենտիմենտալիզմի արձագանքներն են հայ նոր գրականության դարասկզբի կլասիցիզմից ռոմանտիզմի գաղափարաբանությանը անցնելու խաչմերուկում:

Թաղիադյանի աշխարհայցքում և գրական ընկալումներում ևս հետաքրքիր դրսևորումներ ունի սենտիմենտալիզմը: Այն արտահայտվում է հեղինակի անձնական ապրումների, ճակատագրական անորոշության ու հասարակական անարդար հարվածների եղերական արձարձումներով, որն առկա է բանաստեղծություններում, պոեմներում, վիպակներում, ուղեգրություններում, նամակներում և անգամ ինքնակենսագրական և ճամփորդական նոթագրությունների մեջ:

Ասելիքի իրավացիությունը, ընթերցողին ամբողջովին գրավելու, ասածի ու պատմածի ողբերգական ու սրտակեղեք բնույթն առավել ընդգծելու և ամբողջովին համակելու, ընթերցողի կողմից պատմողին որպես սրտակից ընկալելու համար, ժողովրդական խոսքի, պատմելաձևի, բառապաշարի, լեզվամտածողության մի շարք տարրեր դարձան սենտիմենտալիստ հեղինակների արտահայտման հիմնական կերպը: Գրական նոր ուղղությունը նաև իր հետ բերում է արտահայտման նոր միջավայր, գրական տեսակներից սենտիմենտալիզմի դրսևորմանը կարող էին համապատասխանել ծավալուն, էպիկական շնչի ստեղծագործություններ, որոնց զուգակցվում էին քնարաշունչ հուզականություն ու հոգեբանական ծանր ապրումներ: Պատումի բնույթը փոխվում է. կարծես հեղինակը այլևս չի համբերում և զգացմունքների անզուսպ հորդումով միջամտում է հերոսների խոսքին՝ լրացնելով այն ժողովրդական մտածողությանն ու բառապաշարին հատուկ արտահայտություններով, իր վշտի չափն ավելի ընդգծելու համար բնության հի-

---

[10] **Ալամդարյան Հ.,** Չափաբերանք, Եր., «Սովետական գրող» հրատ., 1981:
[11] Հայ նոր գրականության պատմություն, հ. 1, էջ 301:

պերբոլիկ պատկերների համադրությամբ սաստկացնելով այն և դարձնելով ավելի հավաստի: Անձնական վիշտն ու ցավը դառնում է ընդհանուրինը, որն էլ սփոփանքի ձև է հասարակ մահկանացուի համար: «Ընկերովի մահը հարսանիք է»,– կասեր ժողովուրդը:

Սալոնային կերպարների ու հայտնիների փոխարեն սենտիմենտալ գրականության մեջ հերոսներ դարձան սովորական մահկանացուները, որոնք տարբերվում էին շրջապատից իրենց դժբախտությամբ, դաժան ճակատագրով, հալածված, թշվառ կյանքով ու անձնական խոր ապրումներով: Նրանք, որպես կանոն, չէին գնահատվում՝ ըստ իրենց արարքների. խաբեության, նախանձի զոհեր էին, սակայն փորձում էին պահպանել միայն իրենց հատուկ արժանապատվությունն ու մարդկային նկարագիրը: Նվիրված էին ոչ միայն հարազատներին ու իրենց դավանած գաղափարներին, այլև որպես հայկական սենտիմենտալիզմի զուտ ազգային արտահայտություն հայրենասեր էին, կարևորում էին հավատարմությունը Հայոց աշխարհի այլևս պատմություն դարձած անցյալին, աշխարհագրությանը, բնության ճանաչմանն ու գնահատմանը: 19-րդ դարասկզբի գրական հայացքներում ռուսոյական[12] «նուրբ սրտի» և «գեղեցիկ հոգու» տարբերակն առաջնային է դառնում նաև հայկական սենտիմենտալիստական երկերում հանդիպող հերոսների զգացմունքային հոգեվիճակների կերտման համար, հարցը վերաբերվի անձնական ապրումներին, սիրո դժբախտ ընթացքին ու ողբերգական ավարտին, թե հայրենիքի ու ազգի ճակատագրական ու անկումային պահերին: Զգացապաշտությունը որդեգրած հեղինակները շրջապատը, մարդկային կյանքն իր ներքին բովանդակությամբ ու զգացմունքայնությամբ, փորձում էին անցկացնել իրենց իսկ անհատական, զուտ անձնային ու նաև հեղինակային ընկալումների միջով: Այս մասին դիպուկ է ասել ռուսական զգացապաշտության խոշորագույն ներկայացուցիչ Կարամզինը[13] դեռևս 1794 թ. գրված «Ի՞նչ է անհրաժեշտ հեղինակին» («Что нужно автору?») վերնագրով հոդվա-

---

[12] Տե՛ս Ժան-Ժակ Ռուսոյի «Յուլիա կամ Նոր Էլոիզ» վեպը, որը նամակագրական վեպ է և գրվել է 1757–1760 թվականներին: Այն համարվում է գրական սենտիմենտալիզմի կենտրոնական ստեղծագործություններից մեկը:

[13] **Карамзин Н.,** Русский биографический словарь, СПб., Тип. И.Н. Скороходова, 1897, Т. 8, с. 499–500.

ծում[14]: Ալամդարյանը ևս գտնում էր, որ գրողը նա է, ով ոչ միայն գրելու տաղանդ ունի, այլև բարի ու քնքուշ սիրտ, նա պետք է դառնա ընթերցողի բարեկամն ու սիրելին. «…Կարդա՛ մարդկային դժբախտ ցեղի պատմությունը, և եթե քո սիրտը արյունով չլցվի, թո՛ղ գրիչը…»[15]: Մ. Թաղիադյանն էլ հավաստիացնում է, որ հայի արմատն իր հայրենիքն է, իսկ երջանիկ լինելու միակ պայմանը՝ հայրենյաց երջանկությունը: Աբովյանի «Վերք…»-ը ասվածի ծավալուն արտահայտությունն է: Սրանով հայկական սենտիմենտալիստները տարբերվում էին եվրոպական և ռուսական հեղինակներից, քանզի կլասիցիզմի արծարծած համազգային և համապետական խնդիրների փոխարեն սենտիմենտալիզմի գլխավոր թեման՝ մարդու կյանքի ու երջանկության հարցերի քննությունը, ածանցում էին ազգայինն ու հայրենիքի գիտակցությունը: Այսպես. Մեսրոպ Թաղիադյանի «Սոս և Սոնդեպի» պոեմից Սոսը ձգտում է հայրենիք և միայն հայրենի միջավայրում է պատկերացնում լիակատար երջանկությունը, եվրոպական «Աբիլոն»[16] արկածային վեպից հայացրած[17] «Վէպ Վաղգեսի»[18] վեպի Վարդգեսին ուժ է տալիս հայրենի եզերքը, Խ. Աբովյանի «Վերք Հայաստանի» վեպից Աղասին, Վարդանը, Մուսեն գործում են հեղինակի անձնուրաց գիտակցությամբ՝ «Շունչդ տուր, հոգիդ, բայց հայրենիքդ մի՛ տուր թշնամյաց»[19], Ղևոնդ Ալիշանի «Պլպուլն Ավարայրի» պոեմի հայրենանվեր հերոսները[20], Սմբատ Շահազիզի «Լևոնի վիշտը» պոեմի համանուն հերոսը[21], Մկրտիչ Պեշիկթաշլյանի «Զեյթունյան երգաշարը»[22], Պետրոս Դուրյանի՝ անձնական ու ազգային թեմաներով ունեցած ապրումները, որոնցից ծնված զգացողությունները շատ հաճախ վեր են ածվել ողբերգությունների՝ ձևավորելով սենտիմենտալ երգեր[23] (իհարկե, շարքը կարող է երկար լինել):

---

[14] **Карамзин Н.,** Избранные статьи и письма, Современник, 1982, с. 351.
[15] Հայ նոր գրականության պատմություն, հ. 1, էջ 294:
[16] https://hy.wikipedia.org/wiki/ Ալեքսանդրի_վեպը:
[17] Տե՛ս **Միրզաբեկյան Ջ.,** «Մեսրո» ստեղծագործության ծագումը, Հայկական ՍՍՌ գիտությունների ակադեմիայի տեղեկագիր, Հասարակական գիտություններ, թիվ 7, 1961:
[18] **Թաղիադյան Մ.,** Գեղարվեստական երկեր, Եր., «Հայաստան» հրատ., 1965, 430 էջ:
[19] **Աբովյան Խ.,** Երկեր, Եր., «Սովետական գրող» հրատ., 1984, 373 էջ:
[20] **Ալիշան Ղ.,** Երկեր, Եր., «Սովետական գրող» հրատ., 1981, 400 էջ:
[21] **Շահազիզ Ս.,** Երկեր, Եր., «Սովետական գրող» հրատ., 1980, 639 էջ:
[22] **Պեշիկթաշլյան Մ.,** Տաղեր, Եր., Հայպետհրատ, 1961, 200 էջ:
[23] **Դուրյան Պ.,** Երկեր, Եր., «Սովետական գրող» հրատ., 1981, 228 էջ:

Եթե սենտիմենտալիստ հեղինակին հուզում է ոչ թե նյութի բովանդակությունը, այլ դրա ազդեցությունից ձևավորված մարդկային սովորական անձնական ողբերգությունը, ապա հայ հեղինակների մոտ այն նաև հայրենիքի դժբախտ ճակատագրի ազդեցությունն է:

Այս գաղափարը կորդեգրեն հետագա հայ գրականության գրեթե բոլոր հեղինակները՝ իրենց ստեղծագործությունների հիմնական ասելիքը շաղկապելով հայրենիքի ճակատագրին:

Սենտիմենտալիզմի ազդեցությամբ հերոսները ոչ թե պալատական ու ազնվազարմ էին, այլ սովորական մահկանացուներ՝ աղքատ ու հալածական կյանքով ու ճակատագրով, որոնց պահվածքը, բառապաշարն ու հետաքրքրությունները բնականաբար համապատասխանում էին իրենց միջավայրին: Օրինակ՝ Ղևոնդ Ալիշանի «Պլպուլն Ավարայրի» պոեմում հասարակ շինականները, որոնք, երբ իշխանները թշնամուց սարսափած թաքնվում են իրենց ամրոցներում, դուրս են գալիս պայքարի, նաև Աբովյանի հերոսներից շատերը: Հայկական սենտիմենտալիզմի արտահայտություն կարելի է համարել ժողովրդական բարբառային խոսվածքի կիրառումը՝ առածների, ասացվածքների, թևավոր խոսքերի, չափազանցությունների, դիմառնության, այլաբանության, բնության փոխաբերական պատկերների, երգիծանքի ու սարկազմի, անեծքների ու օրհնանքների հարուստ կիրառությունը, որը ստեղծագործության նյութն ավելի էր մոտեցնում անհատին՝ դառնալով ոչ միայն նրա կյանքի ու կենցաղի, այլև զգացմունքների ու հույզերի արտահայտություն: Վերոհիշյալի դրսևորումներ են Հովսեփ Էմինի, Հարություն Արարատյանի, Հարություն Ալամդարյանի, Մեսրոպ Թաղիադյանի, Խաչատուր Աբովյանի, Ղևոնդ Ալիշանի, Հովհաննես Հիսարյանի, Հովսեփ Վարդանյանի, Միքայել Նալբանդյանի, Սրբուհի Տյուսաբի մի շարք ստեղծագործություններ:

Պարզից էլ պարզ է, որ եվրոպական ու ռուսական սենտիմենտալիզմը հայկական գրականության վրա անմիջական ազդեցություն է ունեցել: Հատկապես Աբովյանը, դորպատյան տարիներին մոտիկից ծանոթ լինելով ռուսական գրականության մեջ առաջատար դիրք ունեցող ռոմանտիզմի հայր անվանվող Ժուկովսկու[24] հետ, ազդվելով նրա և ռուսական սենտիմենտալիզմի կարկառուն ներկայացուցիչ Կարամզի-

[24] Տե՛ս От классицизма к романтизму, Ленинград, изд.-во «Наука», 1970, 393 с.

նի[25] ժամանակակից մտածողությամբ ու հետաքրքիր գաղափարներով (հատկապես՝ «Թշվառ Լիզա» վեպը[26]), հակվում է դեպի սենտիմենտալիզմն ու ռոմանտիզմը: Աբովյանի աշխարհայացքի վրա հեղափոխական ազդեցություն ուներ նաև եվրոպական գրականությունն ու փիլիսոփայական միտքը, որոնք նրա անհագ ընթերցանության աղբյուրն էին: Առաջնայի համարելով իր հերոսների զգացմունքները՝ ասելիքը հիմնավորում է հենց դրանց անմիջական արտահայտություններով: «Հիշենք ամբողջ էջեր գրավող հերոսների մենախոսությունները, երգերը, նամակները, այս բոլոր դեպքերում Աբովյանն ու իր հերոսները գրեթե նույնանում են, որովհետև հեղինակային մենախոսություններն ըստ էության քիչ են տարբերվում հերոսների մենախոսություններից»[27]: Ակնհայտ է, որ եվրոպական սենտիմենտալիզմի ազդեցություններից չէր կարող զերծ մնալ Մեծ լուսավորչի նման հուզական, բնավորությամբ խիստ զգացմունքային անհատը, ով հայտնվել էր դորպատյան՝ իր համար օտար միջավայրում, միայնակ և անհագաբար կարդում էր երիտասարդ Ֆ. Շիլլերի և Գյոթեի[28] ստեղծագործությունները, անգամ հայացնում նրանց բանաստեղծություններից[29], Կարամզինի «Ռուս ճանապարհորդի նամակները» գրքից մի հատված[30], իսկ Ժան Ժակ Ռուսոյի «Նոր էլոիզ» վեպը, որքան էլ տակնուվրա էր արել նրա հոգին, այդպես էլ կարողացավ թարգմանել ընդամենը մի փոքրիկ հատված[31]:

Սենտիմենտալիստական ստեղծագործությունների արտահայտման համար ձևավորվեցին գրական նոր ժանրեր ու կառուցման ձևեր: Նախապատվությունն ավելի շատ տրվեց էպիկական տեսակներին, «…որոնք առավել հնարավորություն են տալիս անհատի ներաշխարհի

---

[25] Տե՛ս նույն տեղում:

[26] Карамзин Н., Бедная Лиза, М., изд.-во «Эксмо», 2005, 288 с.

[27] Գրական վերլուծության ուղիները և սկզբունքները, Եր., Հայկական ՍՍՌ ԳԱ հրատ., 1983, էջ 254:

[28] https://hy.m.wikisource.org/wiki/Երիտասարդ_Վերթերի_տառապանքն երը/Գիրք 1-ին, գիրք 2-րդ:

[29] Տե՛ս **Աբովյան Խ.,** Երկերի լիակատար ժողովածու ութ հատորով, Եր., ՀՍՍՌ գիտությունների ակադեմիայի հրատ., 1948, հ. 1 , էջ 269–305:

[30] **Աբովյան Խ.,** Երկերի լիակատար ժողովածու ութ հատորով, Եր., ՀՍՍՌ գիտությունների ակադեմիայի հրատ., 1956, հ. 7, էջ 217:

[31] Տե՛ս **Աբովյան Խ.,** Երկերի լիակատար ժողովածու ութ հատորով, Եր., ՀՍՍՌ Գիտությունների ակադեմիայի հրատ., 1947, հ. 4, էջ 286:

ուղղակի դրսևորման համար, վեպերն ու վիպակները մեծ մասամբ գրվում են նամակների, օրագրության, ճամփորդական նոթերի ձևով»[32]:

Հուշագրությունն իր տարատեսակներով՝ օրագրություն, ուղեգրություն, նամակագրություն, հայ գրականության մեջ անցել է երկար ճանապարհ՝ սկիզբ առնելով ոսկեդարից, անցնելով միջնադարյան շրջափուլերով, հասել է այսօրվան: Յուրաքանչյուր պատմական ընթացք թելադրել է իր կանոնները և պարտադրել իր պահանջները: Նոր գրականության ձևավորման նախասկզբին այն վերաիմաստավորվում է, ստանում սենտիմենտալ ազդեցություններ. կարևոր է դառնում անձնական պատմությունների և ինքնաբնութագրման արտացոլումը հուշերի, նամակների, ճամփորդական նոթերի, օրագրերի ձևով: Վերամբարձ ու խիստ հուզիչ են Հովսեփ Էմինի՝ սենտիմենտալ ոճով գրված հուշագրությունը և հատկապես Մոնտեգյուին հասցեագրված նամակները, Հ. Արարատյանի «Կյանքը» գիրքը[33], Մ. Թաղիադյանի ուղեգրությունները՝ «Ճանապարհորդություն ի Հայս», «Ճանապարհորդութիւն Մ.Դ. Թաղիադեանց ի Պարսկաստան», Խ. Աբովյանի «Վերք Հայաստանի. Ողբ հայրենասիրի» վեպի նամակները, «Դորպատյան օրագրերը», «Ճանապարհորդություն դեպի Անի» ուղեգրությունը, ավելի ուշ՝ արդեն դարակեսին, Միքայել Նալբանդյանի ինքնակենսագրական ատաղձ ունեցող ծայրահեղ հուզական արձակ երկերը[34], Սրբուհի Տյուսաբի «Մայտա»[35] վեպը՝ իր սենտիմենտալ նամակագրական բովանդակությամբ և այլն:

Նոր գաղափարների, աշխարհաքաղաքական ու գաղափարական առաջընթացի արշալույսին՝ 18-ի դարավերջին ու 19-ի դարաշեմին, արևմտահայ մամուլի ու գրականության որոշ ներկայացուցիչներ փորձեցին ընդօրինակել Եվրոպայում արդեն կայուն ճանապարհ անցած զգացապաշտության գրական ուղղության գեղագիտական ու գաղափարական սկզբունքները: Վաղօրոք Պոլսում ձևավորվել էր առաջադեմ մտավորականների այն կորզը, որը մտահոգված էր ազգի հոգ-

---

[32] **Ջրբաշյան Էդ.,** Գրականագիտության ներածություն. բանարվեստի հիմունքներ, Եր., ԵՊՀ հրատ., 2011, էջ 371:

[33] Յարութիւն Արարատեան, Վաղարշապատեցի Յարութիւն Արարատեանի կեանքը, Թիֆլիս, տպ. Արօր Տ. Նազարեանի, 1892, Ժ+254 ութածալ երես:

[34] **Նալբանդյան Մ.,** Երկեր, Եր., «Սովետական գրող» հրատ., 1985, 630 էջ:

[35] **Տյուսաբ Ս.,** Երկեր, Եր., «Սովետական գրող» հրատ., 1980, 682 էջ:

ևոր վարածննդի հարցերով: Առանց կողմնակի առաջադիմական ազդեցությունների՝ մտավորականությունն ի զորու չէր իրականացնել իր ծրագրերը: Ուստի Եվրոպայից ներթափանցած զգացապաշտությունն արևմտահայ գրականության մեջ դարձավ հաստատուն ու որոշիչ՝ մերժելով մինչ այդ իշխող դասականապաշտության գրական ուղղության դրույթները: Ամենակարևորն այն էր, որ ուշադրության կենտրոնում հայտնվեց անհատն իր ներաշխարհով: Բարոյախոսական-խրատական արձակի ձևով զգացապաշտությունն ավելի վաղ արտահայտվեց արևմտահայ, քան արևելահայ գրականության մեջ: Կրոնա-դաստիարակչական արձակի այդ նմուշներն առանձին գրքերով չէին տպագրվում, այլ սփռված էին ժամանակակից մամուլի էջերում:[36] Դրա վառ օրինակներից է Հովհաննես Մամբրե Հիսարյանի «Խոսրով և Մաքրուհի» վեպը, որն էլ արևմտահայ առաջին վեպն է: Այն տպագրվել է Հ. Հիսարյանի խմբագրած «Բանասեր» ամսագրի էջերում 1851 թվականին: Վերջինիս սյուժեն արկածային է: Այստեղ հաստատվում է ճակատագրի թելադրանքով կյանքի ընթացքի անփոփոխելիության գաղափարը, և ազատ կամքի խնդիրը դառնում է անուժ ու ավելորդ:[37,38] Սենտիմենտալիզմի գեղագիտական ուղղության սկզբունքներին այս վեպում համադրվում են նաև ֆատալիստական (ճակատագրապաշտական)[39] փիլիսոփայական ուսմունքի տարրեր: Վեպում պատկերված բնության հարուստ ու գեղեցիկ նկարագրությունների զուգորդությամբ առավել տպավորիչ ու սենտիմենտալ է դառնում հերոսների հուզաշխարհը: Սակայն պետք է նկատել, որ վեպի ամենաբարձր արժանիքն աշխարհաբար լեզուն է: Արևմտահայ գրականության մեջ սենտիմենտալիստական է համարվում նաև այս ժամանակաշրջանում գրված «Աննիձա սեր անպսակ» անավարտ գործը, որը պատկանում է Ն.Ս.Ն. ստորագրությամբ անհայտ հեղինակի գրչին:

---

[36] Տե՛ս **Խաչատրյան Ն.,** Ուղեկիցներիս երթուղիներով, Արևմտահայ առաջին վեպը, Եր., «Ա. Ասմանգուլյան» Ա/Ձ, 2017, էջ 4:

[37] **Առաքելյան Ա..,** Հունական գրականության պատմություն, Եր., «Լույս» հրատ., 1968, էջ 256–276:

[38] Տե՛ս **Կուն Ն.,** Հին Հունական լեգենդներն ու առասպելները, Եր., «Սովետական գրող» հրատ., 1979, 528 էջ:

[39] https://kronadaran.am/dictionary.

Սենտիմենտալիզմի անմիջական ազդեցություններ կան նաև Հովսեփ Վարդանյանի «Ագապի»[40] թրքալեզու հայատառ վեպում:[41]

18-րդ դարավերջին և 19-րդ դարասկզբին ձևավորված մի շարք ուսմունքներ ու ուղղություններ վճռականորեն փորձում էին մերժել գրական ստեղծագործությանը կաշկանդող քարացած ձևերն իրականության արտացոլման նոր ուղիների որոնման ճանապարհին՝ հակադրվելով կլասիցիզմի պահպանողական ու կաշկանդիչ օրենքներին: Ճակատագրապաշտությանն էին հանգում նաև արևելահայ մի շարք հեղինակներ, որոնք առաջնորդվում էին այն խրատականով, թե չի կարելի չարություն անել, քանի որ այն վաղ թե ուշ հատուցվում է: «Արարատ» շաբաթաթերթում[42] տպագրված «Ոչ ոք չէ կարող նախասահմանության կարգը փոխել» վեպը, որի վերնագիրն արդեն բացահայտում է բովանդակությունը:

Ինչ խոսք, հայ գրականության մեջ սենտիմենտալիզմի գրական ազդեցությունների և տևական դրսևորումների մասին կարելի է ընդարձակ խոսել: Հայրենի գրականության մեջ այն օտար չէ, քանզի ազգային բնավորության հիմնագծերից է զգացմունքայնությունը, երբեմն անգամ ծայրահեղ հուզականությունը, և գրականությունը, որը ազգային նկարագիր է ու հոգևոր հարստություն, չէր կարող անմասն մնալ գրական այդ ամենաքնքուշ, ամենահուզական ու զուտ մարդկային ազդեցությունից: Դժվար չէ նկատել, որ մի շարք սկզբունքներ դեռևս մնացել են ակտիվ և կարող են նոր ոճավորմամբ ու ժամանակակից դրսևորումներով գրական նոր ճաշակ թելադրել: Հայ գրականության մեջ 19-րդ դարասկզբին սենտիմենտալիզմն ունեցավ տիրական ազդեցություն՝ դառնալով հիմնական միջոց ազգային խնդիրների վերհանման ու հայրենասիրական ոգևորումների համար:

Ավելի ուշ աշնան ու թախիծի բանաստեղծը կերգի իր սենտիմենտալ հուգու խռովքը, որի մեջ խտացված է հուշի, սիրո ու հայրենիքի կարոտը:

…Արդյոք հիշո՞ւմ ես. երկիրը պայծառ

---

[40] **Վարդանյան Հ.,** Ագապի, Եր., «Սովետական գրող» հրատ., 1979:

[41] Տե՛ս **Խաչատրյան Ն.,** Ուղեկիցներիս երթուղիներով, Կրոնական տարաձայնությունները 19-րդ դարասկզբի հայ գրականության մեջ (Ագապի), Եր., «Ա. Ասմանգուլյան» Ա/Ձ, 2017, էջ 12:

[42] Տե՛ս «Արարատ» պարբերական, Կ. Պոլիս, 1850–1851 թ.:

Ժպտում էր սիրով հավիտենական.
Գարունն էր երգում ձայնով դյութական,
... Հեքիաթի պես էր... Անտառ էր, առու...
... Կյա՛նք, տխուր հովիտ, հավիտյան լալու...
...Արդյոք հիշո՞ւմ ես. հեռո՜ւ էր, հեռո՜ւ...[43]

Եզրակացություններ

Մարդու գիտակցական գոյության ողջ ընթացքում գրականությունը ձևավորվել է որպես հոգեվիճակի արտահայտման ձև՝ հիմքում ունենալով հուզական զգացմունքներ:

Ինչպես հայկական կլասիցիզմը և, ավելի ուշ, հայկական ռոմանտիզմը, այնպես էլ նրան նախորդող սենտիմենտալիզմը, ռոմանտիզմի գրական ուղղությանը հասնելու անցումային շրջափուլում բնութագրվում է հայեցի դրսևորումներով:

18-րդ դարավերջին Եվրոպայում ձևավորված սենտիմենտալիզմի գրական հոսանքը հայ գրականության մեջ ունեցավ հետաքրքիր մարմնավորում:

Ձևավորվեց արտահայտման նոր միջավայր, որին կարող էին համապատասխանել ծավալուն, էպիկական շնչի ստեղծագործություններ՝ զուգակցվելով քնարաշունչ հուզականությամբ ու հոգեբանական ծանր ապրումներով:

Պետականություն չունենալու հանգամանքի դրդմամբ սենտիմենտալիզմի ընդունված կարգից առանձնանում է հայկականը՝ իր հետ վերցնելով հայոց արքաների, զորավարների, հերոսների, պատմական իրողությունների ու հոգևոր կոթողների կլասիցիստական պատմությունները՝ նրանց կորուստը ներկայացնելով որպես համընդհանուր տառապանք:

Ազգային նկարագիր ունեցող առանձնահատկությունները ստիպում են մի կողմից առաջ նայել՝ վիճակից հնար գտնելու հույսով, մյուս կողմից՝ ավելի կապվել անցյալին, երբեմնի հզորությունից կառչելու համար: Այս գաղափարը կորդեգրեն հետագա հայ գրականության բոլոր հեղինակները՝ իրենց ստեղծագործությունների հիմնական ասելիքը

[43] **Տերյան Վ.,** Երկերի ժողովածու, հ. 1, Եր., Հայպետհրատ, 1950, էջ 25:

շաղկապելով նախնիների՝ նոր սերնդի համար օրինակ դարձած հերոսական վարքին ու հայրենիքի՝ պատմություն դարձած անցյալին:

Սենտիմենտալ հերոսները սովորական գյուղացիներ էին, աղքատ ու հալածական կյանքով ու ճակատագրով, որոնց պահվածքը, բառապաշարն ու հետաքրքրությունները բնականաբար համապատասխանում էին իրենց միջավայրին:

Հայկական սենտիմենտալ հերոսը նվիրված է ոչ միայն իր դավանած գաղափարներին, այլև որպես զուտ ազգային երևույթ՝ անմնացորդ հայրենասեր է:

Ժամանակակից գրականության պահանջների ազդեցությամբ սենտիմենտալիզմի ծայրահեղություններին երբեմն քննադատական մոտեցում է ցուցաբերվում, հնացած են համարվում որոշ սկզբունքներ, սակայն այն ամբողջովին չեզոքացնել հնարավոր չէ, քանի դեռ կա գրականության հիմնական առարկան՝ մարդը՝ իր զգացմունքաշատ հույզերով ու անձնակենտրոն ապրումներով:

НАИРА ХАЧАТРЯН

кандидат филологических наук, доцент,

заместитель декана филологического факультета Армянского государственного педагогического университета имени Х. Абовяна,

ПРОЯВЛЕНИЯ СЕНТИМЕНТАЛИЗМА В КОНТЕКСТЕ АРМЯНСКОЙ ЛИТЕРАТУРЫ НАЧАЛА 19-ОГО ВЕКА

Резюме

На протяжении всего сознательного существования человека литература формировалась как форма проявления душевного состояния, основанного на волнительных чувствах.

Литературное течение сентиментализма, сформировавшееся в Европе в конце 18-ого века, имело интересное воплощение в армянской литературе. Сформировалась новая среда выражения, которой могли соответствовать объемные, эпического духа композиции: со-

четающиеся с лирической эмоциональностью и тяжелыми психологическими переживаниями.

Как армянский классицизм, и, позднее, армянский романтизм, так и предшествовавший ему сентиментализм, в переходный период достижения литературного направления романтизма, характеризуется армянскими проявлениями. Под влиянием обстоятельства неимения государственности, армянский выделяется из принятых порядков сентиментализма, впитав в себя классицистические истории об армянских царях, полководцах, героях, исторических реалиях и духовных монументах – представляя их утрату, как всеобщее страдание. Особенности, имеющие национальные характеристики, с одной стороны заставляют смотреть вперед, надеясь найти выход из ситуации, с другой стороны, еще более привязаться к прошлому – для того, чтобы зацепиться за могущество, которое утеряно. Эту идею перенят все авторы последующей армянской литературы, связывая основной посыл своих произведений с героическими деяниями предков, ставшими примером для нового поколения, и с прошлым родины, ставшим историей.

Сентиментальными героями были обычные крестьяне, с бедной и гонимой жизнью и судьбой, поведение, лексикон и интересы которых естественно соответствовали среде, в которой они жили. Армянский сентиментальный герой предан не только исповедуемым им идеям, но также, как чисто национальное явление, он безостаточно патриотичен. Под влиянием требований современной литературы в отношении крайностей сентиментализма иногда проявляется критический подход, считаются устаревшими некоторые принципы, но его нельзя полностью изолировать, пока существует основной предмет литературы – человек, с его полными чувств волнениями и эгоцентричными эмоциами.

Ключевые слова: *волнительные чувства, литературное течение , сентиментализм, национальные идеи, психологические переживания. Армянский, мемуары.*

NAIRA KHACHATRYAN
PhD ASPU Associate Professor

MANIFESTATIONS OF SENTIMENTALISM IN THE CONTEXT OF ARMENIAN LITERATURE OF THE EARLY 19TH CENTURY

Abstract

Throughout the conscious existence of man, literature has been formed as a form of manifestation of a spiritual state based on exciting feelings.

The literary movement of sentimentalism, which emerged in Europe at the end of the 18th century, had an interesting embodiment in Armenian literature. A new environment of expression was formed, to which could correspond voluminous, epic-inspired compositions: combined with lyrical emotionality and hard psychological feelings.

Both Armenian classicism and, later, Armenian romanticism, as well as the sentimentalism that preceded it, in the transitional period of achieving the literary direction of romanticism, are characterized by Armenian manifestations.

Under the influence of the lack of statehood, Armenian stands out from the accepted order of sentimentalism, having absorbed classic stories about Armenian kings, warlords, heroes, historical realities and spiritual monuments – presenting their loss as a universal suffering. Peculiarities with national characteristics, on the one hand, make one look forward, hoping to find a way out of the situation, on the other hand, to become even more attached to the past – in order to cling to a power that has been lost. This idea was adopted by all authors of further Armenian literature, linking the main message of their works with the heroic deeds of their ancestors, which became an example for the new generation, and with the past of the homeland, which became history.

The sentimental heroes were ordinary peasants, with poor and persecuted live and fortune, whose behaviour, vocabulary and interests naturally corresponded to their environment. The Armenian sentimental hero is devoted not only to the ideas he professes, but also, as a purely national phenomenon, he is completely patriotic. Under the influence of the demands of modern literature, a critical approach is sometimes taken towards the extremes of sentimentalism, and some principles are considered outdated, but it cannot be completely isolated as long as the main subject of literature, man, with his excitements full of feeling and egocentric feelings, exists.

Keywords: *exciting feelings, literary movement, sentimentalism, national ideas, psychological experiences, Armenian, memoir.*